



## ԴԱՍ 2

### ԶՈՒՐ, ՇՈԳԻ ԵՒ ԱՄՊ

#### ԶՈՒՐ

Մաքուր զուրը ոչ հոտ ունի, ոչ ալ համ:  
Զուրը անգոյն է եւ թափանցիկ:  
Զուրը բնութեան մէջ հեղուկ վիճակով կը  
գտնուի:

Զուրը ուրիշ ի՞՞նչ վիճակներ կրնայ ստանալ:






Ի՞նչ կը տեսնես պատկերին մէջ:

Թաց լուացք կը չորնայ քանի մը ժամ ետք:  
Ինչո՞ւ:

Չուրք շոգիի կը վերածուի եւ օդին մէջ կը տարածուի:



Շոգին ի՞նչ քանի կազմուած է:

Ծովերուն եւ գետերուն  
ջուրը միշտ կը շոգիանայ  
եւ շոգին կը տարածուի  
օդին մէջ:

Երբ շոգին պաղի ջուրի  
շատ մանր եւ թեթեւ կա-  
րիլներ կը կազմուին:

Անոնք օդին մէջ կը մնան  
եւ կը կազմեն ամպեր:



## ԱՆՁՐԵՒ

Երբ ամպերը ցուրտ օդի կը հանդիպին, ամպ  
կազմած ջուրի մանր կաթիլները կը միանան ու  
կը խտանան, խոշոր կաթիլներ կը դառնան։ Այդ  
խոշոր կաթիլները վար կը քափին։

Կ'ըսենք կ'անձրեւէ կամ անձրեւ կու գայ։



## ԶԻՒՆ

Երբ օդը շատ ցուրտ ըլլայ, անձրեւի մանր կաթիներ պաղէն կը սառին եւ կը վերածուին ձիւնի փաթիներու:



Ընդօրինակ՝.


Ձիւնին վրայ կը չմշկեն:

.....

Սառոյցին վրայ կը սահին:

.....


## ԶՈՒՐԻ ՇՐՋԱՆԸ



Անձրեւի ջուրը կը լեցուի ծովերուն եւ լիճերուն մէջ, կամ գետերուն մէջ քափելով դէպի ծով կը հոսի: Մաս մըն ալ կը մտնէ հողին մէջ, ստորերկրեայ առուակներ կը կազմէ եւ դարձեալ կը հոսի դէպի ծով:


Զուրը այսպէս անդադար շրջան կ'ընէ:

Ի՞նչ կը ներկայացնէ վարի պատկերը: .....




Ըսէ՛ թիւերու շարժին հետեւելով ի՞նչ կը պատահի ջուրին:

Ի՞նչպէս կը կազմուին ամպերը:



Ուրկէ՞ անձրեւ կու գայ:  
Գծէ՞ անձրեւը:



Ներկէ պատկերները: